

զօրաւոր ապացոյցը հին եկեղեցիին գոյութեամբ կը հաստատուի. անոր աւերակները երևան ելան 1873 ին: Եկեղեցին ունի 34 մ. երկարութիւն, 22 մ. լայնութիւն. կողակները երեք են. հարաւի կողմը կան երեք սիւններ իսկ հիւսիսայինը ունի միայն մէկ սիւն, պակասած երկու սիւններուն տեղ կայ պատ մը որ մասը կը կազմէ եկեղեցիին մէջ բովանդակուած տան մը: Սիւներու դիրքը և ուրիշ մասնայատկութիւններ յստակօրէն ցոյց կուտան թէ այս եկեղեցին տեղացի քրիստոնեաներուն գործն է և ոչ թէ Սաչակիրներուն: Սաչակիրներէն առաջ շինուած է: Ըստ գիտուններու, եկեղեցին շինուած է բիւզանդական թուականին, հաւանաբար է. դարուն արաբական արշաւանքէն առաջ. շինութեան մէջ գործածուած սիւններուն մասերը առնրւած են Ա. և Բ. դարու հռովմէական մեհեաններէն: Եկեղեցին շինուած է այնպէս՝ որ կարելի ըլլայ պարփակել երբայական շինութեամբ տուն մը: Պատմագէտ ձեռնհաս ճամբորդի մը կարծիքն է հետեւեալը. «Այս շինութիւնը մասնաւոր երևոյթ մը կուտայ եկեղեցիին, ճիշդ նման է Վերնատան եկեղեցիին, Յիսուս իր վերջին ընթրիքը ըրաւ տան մը մէջ, որ Սիոն լեռան վրայ բիւզանդական եկեղեցիին մէջ պարփակուած է: Այս տունը գոյութիւն ունեցած ըլլալու է նախկին եկեղեցին շինուելէ առաջ, և պարփակուած է՝ անոր նման՝ կրօնական յիշատակարանի մը մէջ, կը կարծենք թէ Կղէոպայի տունն ըլլալու է ան, վասն զի հին աւանդութիւն մը գոյութիւն ունէր ի նպատակ Գուպէպէի, իբր նոր կտակարանի եմմաուոսը: Այս գիւտը կ'աւելցնէ աւանդութեան արժէքը: Եկեղեցին վերաշինուած է 1901 ին (Bar. gd. էջ 285-288):»